

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Հարկային և մաքսային օրենսդրության նորություններ 2

1.1 Օրենքներ-----	2
1.2 ՀՀ կառավարության որոշումներ -----	2

2. Հարկային և մաքսային վարչարարության ներքին դրվագներ 5

2.1 Ծրագրեր և կատարողականություն (մաքսային ծառայության մասով)-----	5
2.2 Ակնարկ գանգատարկումների և ծառայողական քննությունների -----	6
2.3 ՀՀ ԿԱ ՊԵԿ կողմից վերահսկվող եկամուտների վերաբերյալ տվյալներ -----	7
2.4 Հարկային և մաքսային վարչարարության վերաբերյալ վիճակագրական տվյալներ-----	8

1. ԶԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1 Օրենքներ

Փաստաթուղթ	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	25.05.2013, ՀՕ-44-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 29 (969), 5.06.2013
Ուժի մեջ է	26.04.2013

Համառոտ նկարագիր

«Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ՝ Պետական գրանցման համար պետական տուրքի դրույքաչափերը հողվածը լրացվել է

հետևյալ բովանդակությամբ 41-րդ կետով. «41. Համապատասխանության գնահատման մարմնի նշանակման համար՝ բազային տուրքի 120-ապատիկի չափով»:

1.2 ՀՀ կառավարության որոշումներ

Փաստաթուղթ	«Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի նոյեմբերի 11-ի N 1504-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը	29.05.2013, N550-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 30 (970), 07.06.2013
Ուժի մեջ է	17.06.2013

Համառոտ նկարագիր

Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի նոյեմբերի 11-ի «Էլեկտրոնային եղանակով հարկային հաշիվների դուրսգրման, հարկային հաշիվների ձևերի տպագրության, հարկային մարմնից հարկային հաշիվների ձեռքբերման, հարկային հաշիվների սերիայի և համարի գեներացման կարգերը և հարկային հաշիվների ձևերի գինը սահմանելու մասին» N 1504-Ն որոշման մեջ կատարվել են հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1. Հարկային հաշիվներ վավերացնելու լիազորություն ունեցող անձինք (այդ թվում՝ ավելացված արժեքի հարկ վճարող համարվող անհատ ձեռնարկատերերը) գրանցվում

և հաշվառվում են հարկային մարմնում:

2. Էլեկտրոնային եղանակով հարկային հաշիվների դուրսգրման կարգին համապատասխան Էլեկտրոնային եղանակով հարկային հաշիվներ կարող են դուրս գրել դուրսգրման պահին օրենքի համաձայն ԱԱՀ վճարող համարվող անձինք:

3. Էլեկտրոնային հարկային հաշվի ստացումն Էլեկտրոնային ստորագրությամբ վավերացնելու դեպքում հարկ վճարողն այդ հարկային հաշվի վերաբերյալ տեղեկությունները հարկային մարմին չի ներկայացնում: Էլեկտրոնային հարկային հաշվի ստացման վավերացումը միաժամանակ դիտվում է որպես Հայաստանի Հանրապե-



տության կառավարության կողմից սահմանված կարգով՝ կապի միջոցով ստացված էլեկտրոնային հարկային հաշվի մասին տեղեկության ներկայացում:

Հանձնարարողի, պրինցիպալի կամ հարկային մարմին համատեղ գործունեության մասով հարկերը հաշվարկելու և վճարելու պարտավորությունները ստանձնելու մասին հայտարարություն ներկայացրած անձի անունով դուրս գրված էլեկտրոնային հարկային հաշիվները համապատասխանաբար հանձնարարողի, պրինցիպալի կամ հարկային մարմին համատեղ գործունեության մասով հարկերը հաշվարկելու և վճարելու պարտավորությունները ստանձնելու մասին հայտարարություն ներկայացրած անձի կողմից վավերացվելու դեպքում դուրս գրված հարկային հաշիվների վերաբերյալ տեղեկություններ այդ անձանց կողմից հարկային մարմին չեն ներկայացվում:

4. Հարկային հաշվում այն դուրս գրողին վերաբերող պարտադիր լրացման ենթակա տվյալներն՝ անվանումը (անունը, ազգանունը), հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ-ն), գտնվելու վայրը լրացվում են հարկային հաշիվների համակարգի միջոցով՝ տեղեկատվական բազայում առկա տվյալներով:

5. Հարկ վճարողը հարկային հաշիվ դուրս

գրելու համար ծրագրում ընտրում է ծրագրով նախատեսված՝ հարկային հաշվի տեսակը (ապրանքի մատակարարման, ակցիզային հարկով հարկվող ապրանքների մատակարարման, ծառայությունների մատուցման) և ձևը (հարկ վճարողի անունից, հատուկ, մատակարարի անունից, հանձնարարողի (պրինցիպալի) անունից, համատեղ գործերը վարողի անունից) և լրացնում այն: Հարկային հաշիվների ձևերը սահմանվում են վերադաս հարկային մարմնի կողմից հաստատված՝ ծրագրի մշակման տեխնիկական առաջադրանքով:

6. Ծրագիրը հնարավորություն է տալիս դուրս գրելու հատուկ հարկային հաշիվներ կամ օրենքով սահմանված դեպքում հարկային հաշիվներ դուրս գրելու մատակարարի, հանձնարարողի, պրինցիպալի կամ հարկային մարմին համատեղ գործունեության մասով հարկերը հաշվարկելու և վճարելու պարտավորությունները ստանձնելու մասին հայտարարություն ներկայացրած անձի անունից:

7. Ինտերնետային հարկային հաշիվների դուրսգրման ծրագիրն ինտերնետային ցանցում ռեժիմում հնարավորություն է տալիս դիտելու իր և այլ անձանց կողմից տվյալ հարկ վճարողի անվամբ (որպես ապրանքների գնորդ կամ ծառայություններ ստացող կամ հանձնակատարի, գործակալի



կամ համատեղ գործունեության մասնակցի կողմից) դուրս գրված հարկային հաշիվները, հաստատելու էլեկտրոնային հարկային հաշվի ստացումը՝ հարկային հաշվում դնելով էլեկտրոնային ստորագրություն:

8. Դուրս գրված հարկային հաշիվների մասին տեղեկությունների փաթեթը պետք է ստորագրված լինի հարկային մարմնում որպես համապատասխան լիազորությամբ գրանցված անձի էլեկտրոնային ստորագրությամբ:

9. Հարկային մարմնի կողմից տպագրվում են պահանջված տեսակի և ձևի հարկային հաշիվների ձևաթղթեր (այսուհետ՝ ձևեր): Հարկային հաշիվների ձևերը սահմանվում են վերադաս հարկային մարմնի կողմից՝ հարկային հաշիվների տպագրության ծրագրի տեխնիկական առաջադրանքով:

10. Դուրս գրված հարկային հաշիվների անվավեր ճանաչման կարգին համապատասխան անմիջականորեն հարկային հաշիվներ դուրս գրած անձի (հանձնակատարի, գործակալի, համատեղ գործու-



նեության մասնակցի) կողմից անվավեր են ճանաչվում նաև հանձնարարողի, պրինցիպալի կամ հարկերը հաշվարկելու և վճարելու պարտավորությունները ստանձնած անձի անունից դուրս գրված հարկային հաշիվները:

Փաստաթուղթ	«Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի մայիսի 20-ի 1 N685-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը	29.05.2013, N561-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 31 (971), 12.06.2013
Ուժի մեջ է	22.06.2013

Համառոտ նկարագիր

Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի մայիսի 20-ի «Հարկային մարմնի կողմից հարկային հաշիվների թղթային ձևերի տրամադրման, դուրսգրման, պահպանման, ստացված հարկային հաշիվների ձևերի օգտագործման մասին հաշվետվությունը ներկայացնելու, խոտանված, անվավեր ճանաչված և չօգտագործված հարկային հաշիվների ձևերի վերադարձման կարգը սահմանելու մասին» N 685-Ն որոշման մեջ կատարվել են հետևյալ փոփոխությունները և լրացումը՝

1. Հարկային մարմնից հարկային հաշիվների ձևերի ձեռքբերման մասին հայտում

(այսուհետ՝ հայտ) լրացվում են պահանջվող տեսակի (ապրանքների մատակարարման հարկային հաշիվ, ծառայությունների մատուցման հարկային հաշիվ, ակցիզային հարկով հարկվող ապրանքների մատակարարման հարկային հաշիվ) այն տողերը, որոնք անհրաժեշտ են հարկ վճարողին: Հայտում լրացվում են նաև պահանջվող ձևի (հարկ վճարողի անունից, հատուկ, մատակարարի անունից («Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ կետով սահմանված դեպքերի համար՝ օրենքի 20-րդ հոդվածի համաձայն դուրս գրվող),

հանձնարարողի (պրինցիպալի) անունից, հարկային մարմին համատեղ գործունեության մասով հարկերը հաշվարկելու և վճարելու պարտավորություններն ստանձնելու մասին հայտարարություն ներկայացրած անձի անունից) տողերը:

2. Հարկային հաշիվների ձևերը տպագրվում են հայտ ներկայացրած հարկ վճարողին վերաբերող տվյալներն՝ անվանումը (անունը, ազգանունը), գտնվելու վայրը, հարկ վճարողի հաշվառման համարը՝ լրացված վիճակում: Հանձնարարողի (պրինցիպալի), հարկային մարմին համատեղ գործունեության մասով հարկերը հաշ-

վարկելու և վճարելու պարտավորություններն ստանձնելու մասին հայտարարություն ներկայացրած անձի անունից դուրս գրվող հարկային հաշիվների ձևերում համապատասխանաբար տպագրվում են հարկային հաշիվ դուրս գրող անձի՝ հանձնակատարի (գործակալի) համատեղ գործունեության մասնակցի տվյալները: Մատակարարի անունից դուրս գրվող հարկային հաշիվների ձևերում հայտ ներկայացրած հարկ վճարողի տվյալները տպագրվում են հարկային հաշիվ ձևի գևորդին (ապրանք ձեռք բերողին, ծառայություն ստացողին) վերաբերող մասում:

2. ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԴՐՎԱԳՆԵՐ

2.1 | Ծրագրեր և կատարողականություն (մաքսային ծառայության մասով)

Հունիսի 11-ին ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի գլխավորած պատվիրակությունը Խերսոնում մասնակցել է ԱՊՀ մասնակից պետությունների մաքսային ծառայությունների ղեկավարների խորհրդի 57-րդ նիստին: Նիստի ընթացքում քննարկվել են տեղեկատվության փոխանակման արդյունավետության, այդ ընթացակարգերի իրա-

վական ապահովվածությանը վերաբերող հարցեր, առանձնահատուկ ուշադրություն է դարձվել նաև նոր ՄԾՂԽ Պորտալին, դրա կիրառության շրջանակներին և հնարավորություններին:

Հունիսի 18-ին ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեում տեղի է ունեցել ԵՄ կողմից ֆինանսավորվող «Աջակցություն ՀՀ



ԿԱ պետական եկամուտների կոմիտեին մաքսային հսկողության բարելավված ընթացակարգեր մշակելու և իրականացնելու գործում» Թվինինգ ծրագրի կառավարման կոմիտեի հերթական եռամսյակային հանդիպումը, որին մասնակցում էին ծրագրի գործընկերները և Հայաստանում Եվրոպական միության պատվիրակության, Ֆինանսների, Էկոնոմիկայի նախարարությունների, ԵՄ Ծրագրերի իրականացման գրասենյակի ներկայացուցիչները:

Հունիսի 19-20-ը ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակիցը Բրատիսլավայում մասնակցել է ԱՄՆ Էներգետիկայի դեպարտամենտի պաշտպանության երկրորդ գծի գրասենյակի կողմից կազմակերպված «ՉՈՉ հայտնաբերման շարժական համակարգերի ցուցադրություն» թեմայով աշխատաժողովին:

Մայիսի 20-21-ը ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակիցը Մոսկվայում մասնակցել է ԱՊՀ անդամ պետությունների ՄԾՂԽ Պորտալի լրացման և կիրառման վերաբերյալ փորձագետների հանդիպմանը:

Մայիսի 21-ին տեղի է ունեցել «Աջակցություն ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեին մաքսային հսկողության բարելավված ընթացակարգեր մշակելու և իրականացնելու գործում» Թվինինգ ծրագրի մեկամյա գործունեության արդյունքների ամփոփման վերաբերյալ համաժողովը, որը հիմնականում վերաբերում էր ՀՀ մաքսային օրենսդրության արդիականացմանը: Համաժողովին ներկա են գտնվել ՀՀ ԿԱ պետական եկամուտների նախագահը և առաջին տեղակալը, ԵՄ պատվիրակության ղեկավարը, երկարաժամկետ և կարճաժամկետ փորձագետներ, ՀՀ Էկոնո-



միկայի և ՀՀ ֆինանսների նախարարությունների ներկայացուցիչներ, գործարար միջավայրի ներկայացուցիչներ: Համաժողովի ընթացքում նշվեց, որ Թվինինգ ծրագրի փորձագետների աջակցությամբ արդեն իսկ մշակվել և ՀՀ ԿԱ ՊԵԿ մաքսային ծառայության պաշտոնական կայքում տեղադրվել են մաքսային արժեքի և դասակարգման ընթացակարգերի վերաբերյալ երկու ուղեցույց, կայքում նաև ստեղծվել է առանձին ենթաբաժին, որտեղ տեղադրվել են բողոքարկման բոլոր ընթացակարգերը: Համաժողովի ընթացքում կարևորվեց՝ ՀՀ օրենսդրությունն ու գործնական ընթացակարգերը վերանայել նաև «ԵՄ և ՀՀ միջև խոր և համապարփակ ազատ առևտրի» համաձայնագրի վերաբերյալ բանակցությունների համատեքստում, ինչը կնպաստի ԵՄ և ՀՀ մաքսային օրենսդրությունների ներդաշնակեցմանը:

2.2 Ակնարկ գանգատարկումների և ծառայողական քննությունների

2013 թվականի մայիսի 20-ից մինչև 2013 թվականի հունիսի 20-ն ընկած ժամանակահատվածում ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի կողմից ընդունվել է 24 որոշում, որից

- բավարարվել է 9
- բավարարվել է մասնակի 1
- մերժվել է 11
- կարճվել է 3:

2.3 | **ՀՀ ԿԱ ՊԵԿ կողմից վերահսկվող եկամուտների վերաբերյալ տվյալներ**

h/h	Ցուցանիշ	Զափման միավոր	2013թ.		
			Մայիս	Հունվար-մայիս	Աճի տեմպը նախորդ տարվա նկատմամբ (հունվար-մայիս, %)
1	ՀՀ ԿԱ ՊԵԿ կողմից ՀՀ պետական բյուջե հավաքագրված հարկային եկամուտներ, պետական տուրք և պարտադիր սոցիալական ապահովության վճարներ, այդ թվում՝	մլն դրամ	80,360.7	388,779.7	120.4
1.1	Հարկային եկամուտներ, այդ թվում՝	մլն դրամ	77,482.1	366,670.0	139.1
1.1.1	ԱԱՀ	մլն դրամ	29,529.1	156,293.7	123.5
1.1.2	Շահութահարկ	մլն դրամ	9,606.8	51,793.9	101.5
1.1.3	Եկամտահարկ	մլն դրամ	-65.2	6,709.7	-
1.1.4	Եկամտային հարկ	մլն դրամ	22,898.9	86,863.3	124.0
1.1.5	Ակցիզային հարկ	մլն դրամ	2,445.3	11,324.9	107.1
1.1.6	Արտոնագրային վճարներ	մլն դրամ	582.7	2,687.7	156.1
1.1.7	Շրջանառության հարկ	մլն դրամ	1,024.4	4,073.7	-
1.1.8	Ծխախոտի արտադրանքի համար հաստատագրված վճար	մլն դրամ	2,033.2	8,925.5	105.6
1.1.9	«Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքով սահմանված գործունեության տեսակներից հաստատագրված վճար	մլն դրամ	1,061.2	4,734.4	65.6
1.1.10	Մաքսատուրք	մլն դրամ	3,641.5	18,481.2	142.1
1.1.11	Այլ հարկային եկամուտներ	մլն դրամ	4,724.2	14,782.1	143.3
1.2	Պետական տուրք	մլն դրամ	2,128.6	9,693.0	111.8
1.3	Պարտադիր սոցիալական ապահովության վճարներ	մլն դրամ	749.9	12,416.7	-
2	Արտաքին առևտրի ապրանքաշրջանառությունը, այդ թվում՝	մլն դրամ	186 924	948 038	110.4
2.1	Արտահանում	մլն դրամ	43 544	237 382	121.6
2.2	Ներմուծում	մլն դրամ	143 380	710 656	107.1



և մեկ քայլ՝

ԲԻԶՆԵՍԻՆ ԸՆԴԱՌԱՋ

եռամսյա պարբերականությամբ հրապարակվում են «Հարկատու» և «Մաքսատուն» ամսագրերը

2.4 | Հարկային և մաքսային վարչարարության վերաբերյալ վիճակագրական տվյալներ

Հարկային և մաքսային վարչարարության վերաբերյալ վիճակագրական տվյալներ			
h/h	Ցուցանիշ	Չափման միավոր	2013թ. մայիս
1	Նոր գրանցված (ՀՎՀՀ ստացած) հարկ վճարողների թիվ, այդ թվում՝	հատ	1356
1.1	Ֆիզիկական անձ	հատ	1045
1.2	Իրավաբանական անձ	հատ	311
2	Արտաքին տնտեսական գործունեության մասնակիցների թիվ	հատ	5 362
3	Պետական բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ավարտված ստուգումների (ԲՍ) թիվ	հատ	95
4	Պետական բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ավարտված ստուգումների (ԲՍ) արդյունքում առաջադրված գումարներ	մլն դրամ	435,061,686
5	Բռնագանձման և սնանկության համար ներկայացված հայցերի թիվ, այդ թվում՝	հատ	2013թ. հունվար-մայիս 2360
5.1	Բավարարված	հատ	1313
5.2	Մերժված	հատ	36
5.3	Քննության ընթացքում գտնվող	հատ	1911
6	Բռնագանձման և սնանկության համար ներկայացված հայցերով գանձված գումարներ	մլն դրամ	3.198,0
7	Վարչական տույժ նշանակելու մասին որոշումների թիվ	հատ	12525
7.1	Վարչական տույժ նշանակելու մասին որոշումների համաձայն փաստացի գանձված գումարներ	մլն դրամ	235.9
8	ՀՀ ԿԱ ՊԵԿ կողմից հարկ վճարողների գույքի վրա դրված արգելադրումների թիվ	հատ	2099
8.1	ՀՀ ԿԱ ՊԵԿ կողմից հարկ վճարողների գույքի վրա դրված արգելադրումներով փաստացի գանձված գումարներ	մլն դրամ	6.809,4
9	ՀՀ ԿԱ ՊԵԿ հետաքննության վարչության կողմից հարուցված քրեական գործերի թիվ	հատ	24
9.1	ՀՀ ԿԱ ՊԵԿ հետաքննության վարչության կողմից հարուցված քրեական գործերի արդյունքում վերականգնված գումարներ	մլն դրամ	1.783,4
10	ՀՀ ԿԱ ՊԵԿ քննչական վարչության կողմից վարույթ ընդունված քրեական գործերի թիվ, այդ թվում՝	հատ	198
10.1	Ավարտված	հատ	17
10.2	Մեղադրական եզրակացությամբ դատարան ուղարկված	հատ	17
10.3	Կասեցված	հատ	28
11	Քննչական վարչության կողմից վարույթ ընդունված քրեական գործերի արդյունքում վերականգնված գումարներ	մլն դրամ	1000,0

www.customs.am

**բոլոր հարցերն
ունեն իրենց
պատասխանները՝**

www.taxservice.am